ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՕԶՈՆԱՅԻՆ ՇԵՐՏԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2006 թվականի նոյեմբերի 27-ի «Օզոնային շերտի պահպանության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ և 16-րդ կետերով հետևյալ բովանդակությամբ.

«12) **հոսակորուստ՝** սառնագենտ պարունակող կայանքներից (սառնարան, օդորակիչ, ջերմային պոմպեր) և տարաներից սառնագենտի կորուստը տարեկան 3 գրամից ավելի.

13) **հոսակորուստի դիտանցում՝** տնտեսավարողների կողմից օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովվող գործընթաց, որը ենթադրում է սահմանված դեպքերում և ժամանակահատվածում իրենց կողմից շահագործվող օդորակման, սառնամատակարարման, ջերմային պոմպերի համակարգերում հոսակորուստների հայտնաբերման նպատակով ստուգում և արձանագրում համապատասխան գրանցամատյանում.

14) **ռեգեներացված (վերականգնված) օզոնային շերտը քայքայող նյութ՝** արդեն իսկ օգտագործված, սակայն նոր նյութերի բնութագրերին համարժեք վերամշակված սառնագենտ.

15) **արտազատում՝** համակարգից սառնագենտի հեռացում և տարայավորում.

16) **վերամշակում՝** օգտագործված սառնագենտներում աղտոտող նյութերի կրաճատում յուղի տարանջատման, չկոնդեսացվող նյութերի հեռացման, խոնավության աստիճանի, թթվայնության մակարդակի և պինդ մասնիկների նվազեցման եղանակով՝ չորացուցիչների, ֆիլտր չորացուցիչների տեղադրման միջոցով:»:

Հոդված 2. Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել 8-րդ կետով հետևյալ բովանդակությամբ.

«8) օզոնային շերտը քայքայող նյութերի գործածման բնագավառում հոսակորուստների դիտանցման կարգի, դիտանցման արդյունքների հաշվառման գրանցամատյանի վարման կարգի և ձևի հաստատումը:»:

Հոդված 3. Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել 4-րդ կետով հետևյալ բովանդակությամբ.

«4) օզոնային շերտը քայքայող նյութերի ներմուծումը մեկանգամյա օգտագործման տարաներով, բացառությամբ լաբորատոր նպատակներով ներմուծման դեպքերի:»:

Հոդված 4. Օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասը «հաշվետվություն:» բառից հետո լրացնել «Այն տնտեսավարող սուբյեկտները, որոնց կողմից գործարկվող օդորակման, սառնամատակարարման և ջերմային պոմպերի համակարգերը կառավարության կողմից հաստատված կարգով համարվում են հոսակորուստների դիտանցման ենթակա օբյեկտներ, պարտավոր են ոլորտի պետական լիազոր մարմնի գրավոր և կամ (էլեկտրոնային) պահանջով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել նախորդ հաշվետու ժամանակաշրջանների համար օզոնային շերտը քայքայող նյութերի հոսակորուստների դիտանցման արդյունքների վերաբերյալ հաշվառումները: Հոսակորուստների հայտնաբերումից հետո դրանք պետք է վերացվեն հնարավորինս շուտ, բայց ոչ ուշ, քան 14 օվա ընթացքում:» բառերով:

Հոդված 5. Օրենքի 9-րդ հոդվածը լրացնել 4-րդ մասով հետևյալ բովանդակությամբ.

«4) Արգելվում է օզոնային շերտը քայքայող նյութերի ներմուծումը Հայաստանի Հանրապետություն 2024 թվականից, բացառությամբ ռեգեներացված (վերականգնված) նյութերի, որոնք կարող են ներմուծվել մինչև 2030 թվականը ներառյալ:»:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունիսի 1-ին:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

««ՕԶՈՆԱՅԻՆ ՇԵՐՏԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **Անհրաժեշտությունը.**

Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև 2017 թվականի նոյեմբերի 24-ին ստորագրվել է համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը (այսուհետ նաև՝ Համաձայնագիր), իսկ 2018թ. հունիսի 1-ից մեկնարկեց Համաձայնագրի՝ ԵՄ բացառիկ իրավասության ներքո գտնվող դրույթների ժամանակավոր կիրարկումը՝ ըստ նույն համաձայնագրի 385-րդ հոդվածի: Սույն հոդվածի համաձայն՝ մինչև վավերացման գործընթացի ավարտն ու վերջնական ուժի մեջ մտնելը Համաձայնագիրը կարող է ժամանակավորապես կիրարկվել ավանդապահին հանձնելուց հետո երկրորդ ամսվա առաջին օրվանից: Ժամանակավորապես կիրարկվող հոդվածները կազմում են Համաձայնագրի մոտավորապես 80%-ը, իսկ մնացյալ 20%-ը (հիմնականում այն հոդվածները, որոնք գտնվում են ԵՄ անդամ երկրների իրավասության շրջանակներում) ուժի մեջ կմտնի ԵՄ անդամ բոլոր երկրների կողմից Համաձայնագրի վավերացումից հետո: 2019թ. հունիսի 1-ին Համաձայնագրի կիրարկման ճանապարհային քարտեզը (այսուհետ նաև՝ Ճանապարհային քարտեզ) հաստատվել է ՀՀ վարչապետի 666–Լ որոշմամբ, որը ողջունվել է 2019թ. հունիսի 13-ին ՀՀ-ԵՄ Գործընկերության խորհրդի երկրորդ նիստում:

Ժամանակավորապես կիրարկվող հոդվածներից են Համաձայնագրի նաև I-VII հավելվածները, որտեղ ամրագրված կիրարկման ենթակա կանոնակարգերից է Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2009 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ 1005/2009

կանոնակարգը (այսուհետ նաև՝ Կանոնակարգ): Կանոնակարգից բխող պահանջներն արտացոլված են նաև Ճանապարհային քարտեզում, և ըստ ստանձնած պարտավորությունների՝ օզոնային շերտը քայքայող նյութերը վերականգնելու, վերամշակելու, ռեգեներացնելու (վերականգնելու) պարտավորություններ պետք է սահմանվեն համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց 6 տարի հետո, այսինքն՝ 2024 թվականից: Սա նշանակում է, որ այս նոր հասկացությունները պետք է արտացոլվեն ոլորտային ներպետական հիմնական կարգավորիչ իրավական ակտում՝ «Օզոնային շերտի պահպանության մասին» օրենքում: Բացի այս, նույն ժամանակահատվածում պետք է տեղայնացվեն և, որպես պարտավորություն, Օրենքում ներառվեն Կանոնկարգի այն դրույթները, որոնք վերաբերում են օզոնային շերտը քայքայող նյութերի հոսակորուստներին և հոսակորուստների դիտանցմանը, ինչպես նաև ամբողջական մասնագիտական սպասարկմանը, որոնք իրականացվելու են համապատասխան տնտեսավարողների կողմից իրենց շահագործման ներքո գտնվող օդորակման, սառնամատակարարման, ջերմային պոմպերի, ինչպես նաև հրդեհապաշտպան համակարգերի նկատմամբ: Օրենքով սահմանվելու է պարտականություն տնտեսավարողների համար՝ պետական համապաստասխան կառույցի գրավոր և (կամ) էլեկտրոնային պահանջի դեպքում եռօրյա աշխատանքային օրվա ընթացքում սահմանված կարգով ներկայացնելու վերը նշված կայանքների սպասարկման և հոսակորուստների դիտանցման վերաբերյալ հաշվառված տեղեկատվությունը, ինչպես նաև հոսակորուստների հայտնաբերումից հետո դրանց վերացման պարտականություն: Բացի այս, Օրենքի նախագծով նախատեսվելու է օզոնային շերտը քայքայող նյութերի գործածման բնագավառում այդ կայանքներում հոսակորուստների դիտանցման, դրանց արդյունքների հաշվառման կարգի և հաշվառման մատյանի ձևի հաստատման կառավարության լիազորությունը:

2. **Ընթացիկ իրավիճակը և խնդիրները.**

Թեև Օրենքը մեկ տարի առաջ էական փոփոխությունների ենթարկվեց, այդուամենայնիվ այն ունի լրացման խիստ անհրաժեշտություն, քանի որ չի արտացոլում այն իրավակարգավորումները, որոնք գործում են Եվրոպական Միության տվյալ ոլորտում: Դրանք համահունչ են ժամանակակից գիտության պահանջներին, զարգացման միտումներին՝ ուղղված շրջակա միջավայրի պահպանմանն ու բարելավմանը: Հաշվի առնելով Համաձայանգրում ամրագրված երկու կողմերի ներպետական օրենսդրության հարմոնիզացման պահանջը, որը պարտավորեցնում է Հայաստանին՝ կատարելու համարժեք քայլեր, ինչպես նաև Համաձայնագրի իրականացման Ճանապարհային քարտեզը, որտեղ ամրագրված են այդ քայլերը, Օրենքում կատարվում են համապատասխան փոփոխություններ:

3. **Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը.**

Այս բնագավառում Հայաստանի Հանրապետությունը շարունակում է կատարել իր ստանձնած միջազգային պարտավորությունները, որոնք բխում են «Օզոնային շերտի պահպանության մասին» Վիեննայի կոնվենցիայից և «Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին» Մոնրեալի արձանագրությունից և դրանց փոփոխություններից ու լրացումներից, ինչպես նաև Համաձայնագրից և Ճանապարհային քարտեզից: Ըստ այսմ՝ անհրաժեշտ է ապահովել ոլորտի կարգավորիչ իրավական ակտերի ներդաշնակեցում:

4. **Կարգավորման նպատակը և բնույթը.**

Նախագծի ընդունմամբ սահմանվում են մի շարք հասկացություններ և նախատեսվում են կառավարության և պետական լիազոր մարմնի համար ոլորտային որոշ լիազորություններ, որոնք հնարավորություն են տալու իրականացնելու ոլորտային հարաբերությունների լիարժեք իրավակարգավորում՝ ապահովելով Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորությունների իրականացումը: Բացի այս, տնտեսավարողների համար նախատեսվելու է պարտականություն՝ պետական համապատասխան մարմնի սահմանված պահանջի դեպքում ներկայացնել պահանջվող տեղեկատվությունը, ինչպես նաև կսահմանվի մեկանգամյա օգտագործման տարաներով օզոնային շերտը քայքայող նյութերի ներմուծման արգելք:

5. **Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք.**

Նախագիծը մշակվել է շրջակա միջավայրի նախարարության կողմից:

6. **Ակնկալվող արդյունքը.**

Նախագծի ընդունմամբ կապահովվի գործող ոլորտային ներպետական և Եվրոպական Միության ոլորտային օրենսդրության ներդաշնակեցում, որը, որպես պարտավորություն, Հայաստանը ստանձնել է Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև 2017 թվականի նոյեմբերի 24-ին ստորագրված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով: Բացի այս, նոր իրավակարգավորումների արդյունքում ոլորտում հնարավոր կլինի ապահովել հասարակական հարաբերությունների կարգավորման նոր մակարդակ՝ համահունչ ժամանակակից գիտական պահանջներին և միտումներին:

ՏԵՂԵԿԱՆՔ

««ՕԶՈՆԱՅԻՆ ՇԵՐՏԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

««Օզոնային շերտի պահպանության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում տեղի չի ունենա:

ՏԵՂԵԿԱՆՔ

««ՕԶՈՆԱՅԻՆ ՇԵՐՏԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

««Օզոնային շերտի պահպանության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ անհրաժեշտություն կառաջանա կատարելու համապատասխան լրացում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում, ինչպես նաև մի շարք ենթաօրենսդրական ակտեր: